

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թղթադրամների էսքիզների ընտրության նպատակով անցկացվող հրապարակային մրցույթի կազմակերպման մասին

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետև՝ ՀՀ ԿԲ) հայտարարում է հրապարակային մրցույթ՝

1. 1000 դրամ
2. 2000 դրամ
3. 5000 դրամ
4. 10000 դրամ
5. 20000 դրամ
6. 50000 դրամ

անվանական արժեքով Հայաստանի Հանրապետության 3-րդ շարքի թղթադրամների էսքիզների ընտրության համար:

Մրցույթին կարող են մասնակցել բոլոր ցանկացողները:

Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԿԲ՝ ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյանի 6 հասցեով:

Մրցութային հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2017 թ. սեպտեմբերի 15-ը, ժամը 17:00:

Մրցույթի հայտերի բացման օրն ու ժամն է 2017 թ. սեպտեմբերի 19-ը, ժամը 16:00:

Մրցույթի արդյունքների ամփոփման օրն ու ժամն է 2017 թ. հոկտեմբերի 6-ը, ժամը 16:00:

Մրցույթին մասնակցելու հրապարակային ծանուցումը տեղադրված է ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում ([www.cba.am](http://www.cba.am)):

Մրցույթին մասնակցելու ծանուցումը, ինչպես նաև լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել ՀՀ ԿԲ Դրամաշրջանառության վարչություն:

Հեռ.՝ +374 10 59 28 02, 59 28 05, 59 29 04, 59 29 05

Ֆաքս՝ +374 10 52 48 81

Էլ. փոստ՝ [galust.galstyan@cba.am](mailto:galust.galstyan@cba.am)

**ՀՀ ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն**

# Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թղթադրամների էքսիզների ընտրության նպատակով անցկացվող հրապարակային մրցույթի ծանուցում

## 1. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն հրապարակային ծանուցմամբ կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թղթադրամների էքսիզների ընտրության նպատակով անցկացվող հրապարակային մրցույթի (այսուհետև՝ Մրցույթ) հետ կապված հարաբերությունները:

1.2. Մրցույթը հայտարարվում է.

1. 1000 դրամ
2. 2000 դրամ
3. 5000 դրամ
4. 10000 դրամ
5. 20000 դրամ
6. 50000 դրամ

անվանական արժեքով Հայաստանի Հանրապետության 3-րդ շարքի թղթադրամների էքսիզների ընտրության համար:

1.3. Մրցույթի կազմակերպիչ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետև՝ ՀՀ ԿԲ):

## 2. ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Մրցույթին մասնակցելու համար մասնակիցները (այսուհետև՝ Մասնակից) ՀՀ ԿԲ ներկայացնում են Մրցույթի հայտ: Մրցույթի հայտը սույն ծանուցման հիման վրա Մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

2.2 Մասնակիցը ներկայացնում է Մրցույթի հայտը 1.2 կետում նշված թղթադրամների երկու երեսի (դիմերեսի և դարձերեսի) էքսիզների տեսքով՝ **A4 ֆորմատի թղթի վրա** (յուրաքանչյուր թղթադրամի չափով՝ սահմանված է սույն ծանուցման 2.4 կետով), և **էլեկտրոնային եղանակով** (համակարգչով կատարված և ձայնագրված սկավառակի վրա): Նույն թղթի վրա նշվում է Մասնակցի ծածկանունը՝ տառերի կամ թվերի որևէ կապակցություն (Մասնակցի անունը և ազգանունը տվյալ թղթի վրա չի նշվում): Մասնակիցը պետք է նաև ներկայացնի հակիրճ բացատրություն իր կողմից պատրաստված էքսիզների և դրանց պատրաստման համար օգտագործված նյութերի ու դրանց աղբյուրների վերաբերյալ (գրականություն, լուսանկարներ, էլեկտրոնային կայքերի հասցեներ, այլ):

Մասնակցի անունը, ազգանունը և հեռախոսի համարը գրվում են առանձին թղթի վրա, որը տեղադրվում է առանձին փոքր ծրարում, ծրարը փակվում է և վրան նշվում է միայն Մասնակցի ծածկանունը: Թղթադրամի էքսիզները (թղթային և էլեկտրոնային տեսքով) և

Մասնակցի տվյալներով փոքր փակ ծրարը տեղադրվում են մեկ ընդհանուր ծրարի մեջ և փակ տեսքով ներկայացվում Կազմակերպչին:

Ընդհանուր ծրարի վրա պետք է առկա լինեն հետևյալ գրառումները.

- Մասնակցի ծածկանունը,
- ՀՀ ԿԲ հասցեն (Երևան, Վ. Սարգսյանի 6, ՀՀ կենտրոնական բանկ),
- «Թղթադրամների էսքիզների մրցույթ – 2017»,
- «Մրցույթների անցկացման հանձնաժողովին»,
- “ԶԲԱՅԵԼ ՄԻՆՉԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԸ” բառերը:

2.3 Մասնակիցը չի կարող նույն Մրցույթին ներկայացնել մեկից ավելի հայտ (մեկ հայտը՝ ծրարը, կարող է պարունակել մեկից ավելի էսքիզներ), բացառությամբ սույն ծանուցման 3.5 հոդվածով կամ 5-րդ գլխով նախատեսված՝ հայտի փոփոխում ներկայացնելու դեպքի:

2.4 Թղթադրամների էսքիզներին ներկայացվող պարտադիր պահանջներն են.

#### 2.4.1 1000 դրամ անվանական արժեքով թղթադրամ.

Չափը՝ 130 x 72 մմ:

Հիմնական գույնը՝ մանուշակագույն:

Ջրանիշը՝ բազմերանգ պատկեր և անվանական արժեքի թվանշանները (թղթադրամի աջ հատվածում):

Դիմերեսի պարտադիր տարրերը՝

- Պարույր Սևակի դիմանկարը,
- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» գրառումը հայերեն և անգլերեն լեզուներով,
- անվանական արժեքը թվերով՝ «1000» (թղթադրամի աջ և ձախ հատվածներում), և տառերով՝ «ՀԱՉԱՐ ԴՐԱՄ» (թղթադրամի աջ հատվածում),
- թողարկման տարեթիվը՝ «2018»,
- «ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ» և «ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ» գրառումները և դրանց ներքևում՝ տվյալ պաշտոնյաների ստորագրությունները,
- համարանիշը՝ բաղկացած «ԱԱ» տառերից ու 8 թվանշաններից (թղթադրամի աջ հատվածում հորիզոնական, իսկ ձախ հատվածում ուղղահայաց),
- թափանցիկ պատուհանը՝ առավելագույնը 10 x 12 մմ չափով, կարող է պարունակել ցանկացած ձևի որևէ պատկեր (ջրանիշի վերևի մասում),
- պատուհանաձև ներգիծը՝ ուղղահայաց, 4.0 մմ լայնությամբ և 3 տեսանելի հատվածներով (թղթադրամի աջ հատվածում),
- փայլուն պատկերը՝ առավելագույնը 20 x 20 մմ չափով, կարող է պարունակել ցանկացած ձևի որևէ պատկեր (թղթադրամի ներքևի ձախ հատվածում):

Դարձերեսի պարտադիր տարրերը՝

- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» գրառումը հայերեն լեզվով,
- անվանական արժեքը թվերով՝ «1000» (թղթադրամի աջ և ձախ հատվածներում), և տառերով՝ «ՀԱՉԱՐ ԴՐԱՄ»:

#### 2.4.2 2000 դրամ անվանական արժեքով թղթադրամ.

Չափը՝ 135 x 72 մմ:

Հիմնական գույնը՝ շագանակագույն:

Ջրանիշը՝ բազմերանգ պատկեր և անվանական արժեքի թվանշանները (թղթադրամի աջ հատվածում):

Դիմերեսի պարտադիր տարրերը՝

- Տիգրան Պետրոսյանի դիմանկարը,
- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» գրառումը հայերեն և անգլերեն լեզուներով,
- անվանական արժեքը թվերով՝ «2000» (թղթադրամի աջ և ձախ հատվածներում), և տառերով՝ «ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» (թղթադրամի աջ հատվածում),
- թողարկման տարեթիվը՝ «2018»,
- «ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ» և «ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ» գրառումները և դրանց ներքևում՝ տվյալ պաշտոնյաների ստորագրությունները,
- համարանիշը՝ բաղկացած «ԲԱ» տառերից ու 8 թվանշաններից (թղթադրամի աջ հատվածում հորիզոնական, իսկ ձախ հատվածում ուղղահայաց),
- թափանցիկ պատուհանը՝ առավելագույնը 10 x 12 մմ չափով, կարող է պարունակել ցանկացած ձևի որևէ պատկեր (ջրանիշի վերևի մասում),
- պատուհանաձև ներգիծը՝ ուղղահայաց, 4.0 մմ լայնությամբ և 3 տեսանելի հատվածներով (թղթադրամի աջ հատվածում),
- փայլուն պատկերը՝ առավելագույնը 20 x 20 մմ չափով, կարող է պարունակել ցանկացած ձևի որևէ պատկեր (թղթադրամի ներքևի ձախ հատվածում):

Դարձերեսի պարտադիր տարրերը՝

- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» գրառումը հայերեն լեզվով,
- անվանական արժեքը թվերով՝ «2000» (թղթադրամի աջ և ձախ հատվածներում), և տառերով՝ «ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ»:

#### 2.4.3 5000 դրամ անվանական արժեքով թղթադրամ.

Չափը՝ 140 x 72 մմ:

Հիմնական գույնը՝ կարմիր (նարնջագույն երանգով):

Ջրանիշը՝ բազմերանգ պատկեր և անվանական արժեքի թվանշանները (թղթադրամի աջ հատվածում):

Դիմերեսի պարտադիր տարրերը՝

- Վիլյամ Սարոյանի դիմանկարը,
- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» գրառումը հայերեն և անգլերեն լեզուներով,
- անվանական արժեքը թվերով՝ «5000» (թղթադրամի աջ և ձախ հատվածներում), և տառերով՝ «ՀԻՆԳ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» (թղթադրամի աջ հատվածում),
- թողարկման տարեթիվը՝ «2018»,
- «ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ» և «ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ» գրառումները և դրանց ներքևում՝ տվյալ պաշտոնյաների ստորագրությունները,

- համարանիշը՝ բաղկացած «ԳԱ» տառերից ու 8 թվանշաններից (թղթադրամի աջ հատվածում հորիզոնական, իսկ ձախ հատվածում ուղղահայաց),
- թափանցիկ պատուհանը՝ առավելագույնը 10 x 12 մմ չափով, կարող է պարունակել ցանկացած ձևի որևէ պատկեր (ջրանիշի վերևի մասում),
- պատուհանաձև ներգիծը՝ ուղղահայաց, 4.0 մմ լայնությամբ և 3 տեսանելի հատվածներով (թղթադրամի աջ հատվածում),
- փայլուն պատկերը՝ առավելագույնը 20 x 20 մմ չափով, կարող է պարունակել ցանկացած ձևի որևէ պատկեր (թղթադրամի ներքևի ձախ հատվածում):

Դարձերեսի պարտադիր տարրերը՝

- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» գրառումը հայերեն լեզվով,
- անվանական արժեքը թվերով՝ «5000» (թղթադրամի աջ և ձախ հատվածներում), և տառերով՝ «ԻՆԳ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ»:

**2.4.4 10000 դրամ անվանական արժեքով թղթադրամ.**

Չափը՝ 145 x 72 մմ:

Հիմնական գույնը՝ մոխրագույն:

Ջրանիշը՝ բազմերանգ պատկեր և անվանական արժեքի թվանշանները (թղթադրամի աջ հատվածում):

Դիմերեսի պարտադիր տարրերը՝

- Կոմիտասի դիմանկարը,
- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» գրառումը հայերեն և անգլերեն լեզուներով,
- անվանական արժեքը թվերով՝ «10000» (թղթադրամի աջ և ձախ հատվածներում), և տառերով՝ «ՏԱՍԸ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» (թղթադրամի աջ հատվածում),
- թողարկման տարեթիվը՝ «2018»,
- «ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ» և «ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ» գրառումները և դրանց ներքևում՝ տվյալ պաշտոնյաների ստորագրությունները,
- համարանիշը՝ բաղկացած «ԴԱ» տառերից ու 8 թվանշաններից (թղթադրամի աջ հատվածում հորիզոնական, իսկ ձախ հատվածում ուղղահայաց),
- թափանցիկ պատուհանը՝ առավելագույնը 10 x 12 մմ չափով, կարող է պարունակել ցանկացած ձևի որևէ պատկեր (ջրանիշի վերևի մասում),
- պատուհանաձև ներգիծը՝ ուղղահայաց, 5.0 մմ լայնությամբ և 3 տեսանելի հատվածներով (թղթադրամի աջ հատվածում),
- փայլուն պատկերը՝ առավելագույնը 20 x 20 մմ չափով, կարող է պարունակել ցանկացած ձևի որևէ պատկեր (թղթադրամի ներքևի ձախ հատվածում):

Դարձերեսի պարտադիր տարրերը՝

- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» գրառումը հայերեն լեզվով,
- անվանական արժեքը թվերով՝ «10000» (թղթադրամի աջ և ձախ հատվածներում), և տառերով՝ «ՏԱՍԸ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ»:

#### 2.4.5 20000 դրամ անվանական արժեքով թղթադրամ.

Չափը՝ 150 x 72 մմ:

Հիմնական գույնը՝ կանաչ:

Ջրանիշը՝ բազմերանգ պատկեր և անվանական արժեքի թվանշանները (թղթադրամի աջ հատվածում):

Դիմերեսի պարտադիր տարրերը՝

- Հովհաննես Այվազովսկու դիմանկարը,
- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» գրառումը հայերեն և անգլերեն լեզուներով,
- անվանական արժեքը թվերով՝ «20000» (թղթադրամի աջ և ձախ հատվածներում), և տառերով՝ «ՔՍԱՆ ՀԱՉԱՐ ԴՐԱՄ» (թղթադրամի աջ հատվածում),
- թողարկման տարեթիվը՝ «2018»,
- «ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ» և «ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ» գրառումները և դրանց ներքևում՝ տվյալ պաշտոնյաների ստորագրությունները,
- համարանիշը՝ բաղկացած «ԵԱ» տառերից ու 8 թվանշաններից (թղթադրամի աջ հատվածում հորիզոնական, իսկ ձախ հատվածում ուղղահայաց),
- թափանցիկ պատուհանը՝ առավելագույնը 10 x 12 մմ չափով, կարող է պարունակել ցանկացած ձևի որևէ պատկեր (ջրանիշի վերևի մասում),
- պատուհանաձև ներգիծը՝ ուղղահայաց, 5.0 մմ լայնությամբ և 3 տեսանելի հատվածներով (թղթադրամի աջ հատվածում),
- փայլուն պատկերը՝ առավելագույնը 20 x 20 մմ չափով, կարող է պարունակել ցանկացած ձևի որևէ պատկեր (թղթադրամի ներքևի ձախ հատվածում):

Դարձերեսի պարտադիր տարրերը՝

- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» գրառումը հայերեն լեզվով,
- անվանական արժեքը թվերով՝ «20000» (թղթադրամի աջ և ձախ հատվածներում), և տառերով՝ «ՔՍԱՆ ՀԱՉԱՐ ԴՐԱՄ»:

#### 2.4.6 50000 դրամ անվանական արժեքով թղթադրամ.

Չափը՝ 155 x 72 մմ:

Հիմնական գույնը՝ ոսկեգույն:

Ջրանիշը՝ բազմերանգ պատկեր և անվանական արժեքի թվանշանները (թղթադրամի աջ հատվածում):

Դիմերեսի պարտադիր տարրերը՝

- Գրիգոր Լուսավորչի պատկերը,
- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» գրառումը հայերեն և անգլերեն լեզուներով,
- անվանական արժեքը թվերով՝ «50000» (թղթադրամի աջ և ձախ հատվածներում), և տառերով՝ «ՀԻՍՈՒՆ ՀԱՉԱՐ ԴՐԱՄ» (թղթադրամի աջ հատվածում),
- թողարկման տարեթիվը՝ «2018»,
- «ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ» և «ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ» գրառումները և դրանց ներքևում՝ տվյալ պաշտոնյաների ստորագրությունները,

- համարանիշը՝ բաղկացած «ԷԱ» տառերից ու 8 թվանշաններից (թղթադրամի աջ հատվածում հորիզոնական, իսկ ձախ հատվածում ուղղահայաց),
- թափանցիկ պատուհանը՝ առավելագույնը 10 x 12 մմ չափով, կարող է պարունակել ցանկացած ձևի որևէ պատկեր (ջրանիշի վերևի մասում),
- պատուհանաձև ներգիծը՝ ուղղահայաց, 5.0 մմ լայնությամբ և 3 տեսանելի հատվածներով (թղթադրամի աջ հատվածում),
- փայլուն պատկերը՝ առավելագույնը 20 x 20 մմ չափով, կարող է պարունակել ցանկացած ձևի որևէ պատկեր (թղթադրամի ներքևի ձախ հատվածում):

Դարձերեսի պարտադիր տարրերը՝

- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» գրառումը հայերեն լեզվով,
- անվանական արժեքը թվերով՝ «50000» (թղթադրամի աջ և ձախ հատվածներում), և տառերով՝ «ՀԻՍՈՒՆ ՀԱՉԱՐ ԴՐԱՄ»:

2.5 Մրցութային ընտրությունը կատարելու ժամանակ հնարավոր է, որ լավագույն ճանաչված էքսիզները (թղթադրամի դիմերեսի կամ դարձերեսի համար) կատարված լինեն տարբեր հեղինակների կողմից: Լավագույն ճանաչված յուրաքանչյուր կողմի (դիմերես կամ դարձերես) էքսիզի համար սահմանվում է մրցանակային գումար 150.000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը:

### **3. ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

3.1 Մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԿԲ առձեռն կամ փոստային ծառայության միջոցով՝ պատվիրված նամակով: Ներկայացված Մրցույթի հայտերն ընդունում է ՀՀ ԿԲ գլխավոր քարտուղարության Փաստաթղթերի շրջանառության բաժինը:

3.2 Մասնակցի պահանջով Մասնակցին տրամադրվում է ՀՀ ԿԲ գլխավոր քարտուղարության Փաստաթղթերի շրջանառության բաժնի կողմից ստորագրված և կնքված համապատասխան տեղեկանք՝ Մրցույթի հայտն ընդունելու մասին, որում նշվում է Մասնակցի ծածկանունը, հայտի ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը, հայտը ընդունող աշխատակցի անունը, ազգանունը և պաշտոնը: Մրցութային հայտը պատվիրված նամակով ուղարկելու դեպքում ՀՀ ԿԲ գլխավոր քարտուղարության Փաստաթղթերի շրջանառության բաժնի կողմից ստորագրված և կնքված համապատասխան տեղեկանքը Մասնակցին ուղարկվում է նամակով կամ ֆաքսով:

3.3 ՀՀ ԿԲ պատասխանատվություն չի կրում փոստով ուղարկված մրցույթի հայտերի՝ վերջնական ժամկետից ուշ կամ բացված տեսքով կամ այլ կերպ վնասված ստանալու համար:

3.4 Մրցույթին վերաբերող բոլոր փաստաթղթերը կազմվում են հայերեն, անգլերեն կամ ռուսերեն լեզուներով:

3.5 Մրցույթի Մասնակիցները մինչև Մրցույթի հայտերը ներկայացնելու վերջնական ժամկետի ավարտը կարող են փոփոխել կամ հետ վերցնել հայտերը (հրաժարվել Մրցույթին մասնակցելուց): Մրցույթի հայտի փոփոխությունը կատարվում է սույն հրավերով Մրցույթի հայտ ներկայացնելու համար նախատեսված կարգով՝ համապատասխան ծրարի վրա ավելացնելով «փոփոխում» բառը: Մրցույթին մասնակցելուց հրաժարվելու դեպքում այդ մասին ծանուցումը կարող է ուղարկվել նամակով կամ ֆաքսով:

#### **4. ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՕՐԸ, ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԸ**

4.1 Մրցույթի հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2017 թ. սեպտեմբերի 15-ը, ժամը 17:00:

4.2 Մրցույթի հայտերի բացումը կատարվելու է ՀՀ ԿԲ՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 6 հասցեով, մրցույթների անցկացման հանձնաժողովի նիստում՝ 2017 թ. սեպտեմբերի 19-ին, ժամը 16:00:

4.3 Մրցույթի արդյունքների ամփոփումը կատարվելու է ՀՀ ԿԲ՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 6 հասցեով, մրցույթների անցկացման հանձնաժողովի նիստում՝ 2017 թ. հոկտեմբերի 6-ին, ժամը 16:00:

4.4 Մրցույթների անցկացման հանձնաժողովը՝ Մրցույթի հայտերի բացման օրը Մասնակիցների կողմից ներկայացրած հայտերի ուսումնասիրությունից հետո, կարող է փոփոխել հրավերով նախատեսված Մրցույթի հայտերի ամփոփման օրը և ժամը՝ դրա մասին տեղեկատվությունը տեղադրելով ՀՀ ԿԲ ինտերնետ կայքում ([www.cba.am](http://www.cba.am)):

#### **5. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՄԲ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ**

5.1 Մրցույթի պայմաններում, ինչպես նաև Մրցույթի հայտերը բացելու օրվա և ժամի վերաբերյալ փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում ՀՀ ԿԲ կատարում է համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ հրապարակային ծանուցման մեջ (այսուհետև՝ հրապարակային ծանուցման փոփոխություն) և այն տեղադրում է ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում ([www.cba.am](http://www.cba.am)):

5.2 Հրապարակային ծանուցման փոփոխությունները կարող են կատարվել մինչև Մրցույթի հաղթողին որոշելու օրը: Հրապարակային ծանուցման մեջ փոփոխություններ կատարելու դեպքում Մասնակիցները իրավունք ունեն 10-օրյա ժամկետում և սույն ծանուցմամբ սահմանված կարգով Մրցույթի հայտերում կատարել լրացուցիչ փոփոխություններ: ՀՀ ԿԲ հրապարակային ծանուցման փոփոխության դեպքում չի կրում Մասնակիցների կողմից կրած վնասների ռիսկը:



5.3 Հրապարակային ծանուցման փոփոխությամբ թույլատրվում է կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում Մրցույթի պայմանների մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները:

## **6. ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՄՐԳՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ**

Հայտերի գնահատումը իրականացնում է ՀՀ ԿԲ մրցույթների անցկացման հանձնաժողովը: Հայտերի բացումը, գնահատումը և Մրցույթի հաղթողի ընտրության կարգը սահմանվում է ՀՀ ԿԲ նախագահի 29.04.2004թ. թիվ 1/180Լ որոշմամբ հաստատված «ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող հրապարակային մրցույթների կազմակերպման մասին» կանոնակարգի դրույթներին համապատասխան: Սույն կանոնակարգով սահմանված պահանջներին՝ ծրարներին, մրցույթի հայտերի ներկայացման ժամկետներին, մրցույթի հայտերով ներկայացման ենթակա տեղեկություններին, փաստաթղթերին, այլ ներկայացվող պահանջներին չհամապատասխանող հայտերը մրցույթների անցկացման հանձնաժողովի կողմից մերժվում են և վերադարձվում ներկայացնողին:

## **7. ՄՐԳՈՒՅԹԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ**

7.1 Մասնակիցն իրավունք ունի ՀՀ ԿԲ-ից պահանջել Մրցույթի ծանուցման պարզաբանում: Սույն ծանուցման վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար Մասնակիցը կարող է դիմել ՀՀ ԿԲ: Այդպիսի պարզաբանումների պահանջները կարող են ներկայացվել ոչ ուշ, քան Մրցույթի հայտերի ընդունման վերջնաժամկետը լրանալուց առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

7.2 ՀՀ ԿԲ պարզաբանումը տրամադրում է հարցումը ստանալու օրվանից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հրավերի 7.1 կետով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է Մրցույթի հրավերի բովանդակության շրջանակից:

## **8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ**

8.1 Մրցույթների անցկացման հանձնաժողովի որոշման հիման վրա ՀՀ ԿԲ ընտրված Մասնակցի հետ կնքում է գնման պայմանագիր: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

8.2 Ընտրված Մասնակիցը հայտարարվելուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ԿԲ ծանուցում է ընտրված Մասնակցին դրա մասին և ներկայացնում նրան գնման պայմանագիր կնքելու առաջարկը և գնման պայմանագրի նախագիծը:

8.3 Եթե ընտրված Մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և գնման պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա

ընթացքում չի ստորագրում գնման պայմանագիրը, ապա նա զրկվում է գնման պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

8.4 Մինչև սույն հրավերի 8.3 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը:

## **9. ՄՐԾՈՒՅԹԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ**

9.1 Մրցույթների անցկացման հանձնաժողովը Մրցույթը չկայացած է հայտարարում, եթե՝  
ա) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում ծանուցման պայմաններին,  
բ) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը,  
գ) ոչ մի հայտ չի ներկայացվել,  
դ) մրցույթի արդյունքում գնման պայմանագիր չի կնքվել:

9.2 Մրցույթը չկայացած հայտարարվելուց հետո ՀՀ ԿԲ ինտերնետ կայքում հրապարակվում է հայտարարություն, որտեղ նշվում է Մրցույթը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

9.3 ՀՀ ԿԲ մինչև Մրցույթի հաղթողին որոշելու օրը (Մրցույթի հայտերի ամփոփման օրը) իրավունք ունի հրաժարվել Մրցույթ անցկացնելուց: Այս դեպքում ՀՀ ԿԲ չի կրում Մասնակիցների կողմից կրած վնասների ռիսկը:

## **10. ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ/ԿԱՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ՄԱՍՆԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԿԱՐԳԸ**

10.1 Յուրաքանչյուր անձ ունի բողոքարկման իրավունք, եթե հայտարարում է, որ ՀՀ ԿԲ մրցույթների անցկացման հանձնաժողովի գործողությունների հետևանքով կրել է կամ կարող է կրել վնասներ:

10.2 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի՝  
ա) բողոքարկել ՀՀ ԿԲ մրցույթների անցկացման հանձնաժողովի գործողությունները ՀՀ ԿԲ խորհրդին,  
բ) դատական կարգով բողոքարկել ՀՀ ԿԲ մրցույթների անցկացման հանձնաժողովի գործողությունները: